նորին եւ 'ի հաշիւ արկեալ զանձնական դրամս նորին, զոր 80,000 դահեկան, զորս ժողովեալ էր 'ի դպրութենէ իւրմէ մինչեւ ցվախճան իւր, զորս եդին յարկղն հասարակաց, և դարձեալ կնքեցին զՊատրիարքարանն, թողեալ զկահս և զկարասիս իւրաքանչիւր 'ի տեղւոջ իւրում։

Գումարեցաւ ժողով մեծ ազգային 'ի Մայր Եկեղեցին Կոստանդինուպօլսոյ, ուր ընթերցան հանրագրութիւնք միաբանաց Երուսաղէմի, որք վասն ընտրութեան Նորոյ Պատրիարքի, ('ի 20 Սեպտեմբերի)։ Եւ 'ի ժողովի աստ թողեալ զինդիր Պատրիարքութեան, նախ՝ ընտրեցին 'ի միաբանութենէ զարժանաւոր անձինս լինիլ Խորհրդական, որք էին՝ Գաբրիէլ Եպիսկոպոս Փոխանորդ, Մեղրիկ Մկրտիչ Եպիսկոպոս Լուսարար, Եղիա Եպիսկոպոս Դարպասընկալ և Աւագ Թարգման. Նախկին Լուսարար Սիմէոն Եպիսկոպոս, (զոր ընկեցեալ էր Պօղոս 'ի պաշտօնէ). Կարապետ Եպիսկոպոս Ճառամի, Մինաս Եպիսկոպոս Մոմաշէն, Կիրակոս Եպիսկոպոս Երուսաղէմացի. Մերուանի Ստեփաննոս վարդապետ, և գրեցին եօթն կանոնական բանս, յաւելեալ 'ի վերայ 12 կանոնական բանից վասն բարւոք կառավարութեան Աթոռոյն, և բազմակնիք գիր մահսերական, եւ ընտրեցին զՓոխանորդն Երուսաղէմի զՑակոբ վարդապետ իբր Փոխանորդ 'ի կողմանէ ազգին, եդեալ 'ի տեղի նորա զՄարկոս Եպիսկոպոս։ Մեկնեցաւ Ցակոբ այսոքիւկ գրեամբք 'ի մայրաքաղաքէ անտի ('ի 1 Հոկտեմբերի) եւ հասեալ յԱքքէ՝ կատարեաց անդ զգործն ընդ Կուսակալին՝ և եհաս յԵրուսաղէմ, (1819. 'ի 13 Յունվարի)։ Եւ յետ երկուց աւուրց բացեալ զգրեանս ընթերցաւ առաջի ամենեցուն, որոշեաց զԽորհրդարանն և հաստատեաց զազգընտիր Խորհրդականս, և ամենեքեան հնազանդեալ հաճութեամբ ընկալան զհրաման ազգին, և սկսան սիրով և յօժարութեամբ հոգալ զՍ. Աթոռն. Եւ 'ի նմին ամի վճարեցին 663,000 դահեկանս 'ի պարտուց։ Եհարց Ցակոբ վարդապետ վասն ընչից հանգուցեալ Պատրիարքին, որպէս պատուիրեալ էին նմա ազգայինք. և Խորհրդականք պատմեցին նմա մի ըստ միոջէ՝ որպէս արարեալ էին՝ զորմէ գրեցաք։ Յետ կարդաւորելոյ զայսոսիկ՝ գրեաց թա-